# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

№ 9 - Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 24-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության և փրկարարական ծառայողի, քաղաքացիական ծառայողի, վարչական ու հայեցողական պաշտոն զբաղեցնող անձի, գրասենյակի, կազմակերպության և հիմնարկի ղեկավարի վկայականների նկարագրերը, ձևերը և տրամադրման կարգերը սահմանելու մասին» N 24-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ լրացումները.

1) վերնագրում և 1-ին կետի 3-րդ ենթակետում «հիմնարկի ղեկավարի» բառերից հետո լրացնել «, առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի» բառերով.

2) հրամանով սահմանված 3-րդ հավելվածի վերնագրում և ամբողջ տեքստում «հիմնարկի ղեկավար» բառերից և իր համապատասխան հոլովաձևերից հետո լրացնել «,

առանձին գործառույթներ համակարգող խորհրդական» բառերը՝ ըստ համապատասխան հոլովաձևերի.»:

3) հրամանի 3-րդ հավելվածի 22-րդ և 23-րդ կետերում «վկայականի» բառից հետո լրացնել «(բացառությամբ առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի վկայականի)» բառերով.

4) հրամանի 3-րդ հավելվածը լրացնել նոր 23.1-ին կետով հետևյալ խմբագրությամբ.

«23.1. Առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի վկայականի կորստյան, օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում աշխատողն անմիջապես դիմում է ներկայացնում ՀՀ ՆԳՆ ստորաբաժանման ղեկավարին:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Ա. ՍԱՐԳՍՅԱՆ***

***30.01.2026***

***ՀԱՍՏԱՏՎԱԾ Է***
***ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ***
***ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ***